ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"13" փետրվար 2026թ. N 260-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ 6-Ի ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ 4 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2/13/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

06.02.2026թ. ք. Երևան

2026թ. փետրվարի 6-ին ժամը 12:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը

<u>Օրակարգում՝</u>

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Մարտունու տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի մրցույթը երկու առանձին տարածաշրջաններով կազմակերպելը՝

1. Վարդենիս
2. Մարտունի:

<u>Քննարկվեց՝</u>

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Մարտունու տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի մրցույթը երկու առանձին տարածաշրջաններով կազմակերպելու հարցը՝

1. Վարդենիս
2. Մարտունի:

Արձանագրվեց՝

2024 թվականին հայտարարվել է Գեղարքունիքի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթ, որը չի կայացել հայտատուի կողմից մրցութային կարգով սահմանված պահանջները չապահովելու պատճառով:
Գեղարքունիքի մարզի համար մրցույթ հայտարարվել է նաև 2025 թվականի հունվարի 24-ին, սակայն այն չի կայացել հայտերի բացակայության պատճառով:
2026 թվականի հունվարի 27-ին հայտարարվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Մարտունու տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթ, որը ևս չի կայացել հայտերի բացակայության պատճառով:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

Հաշվի առնելով Գեղարքունիքի մարզի միասնական երթուղային ցանցի չկայացած մրցույթները և պահանջվող մեծ ներդրումները Վարդենսի և Մարտունու տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի մրցույթը կազմակերպել երկու առանձին տարածաշրջաններով՝

1. Վարդենիս
2. Մարտունի:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան